ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

01.11.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ. Հունանյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության գլխավոր մասնագետ Վ. Իրիցյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ.Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր գրաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ.Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտերում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակ	Ընդհանուր (նախահաշվային) գին	Մասնակցի անվանումը	Գինը (առանց ԱԱՀ)	ԱԱՀ	Գինը (ԱԱՀ-ով)
1	Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ	դրամ	1	16,200,000	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	13,500,000	2,700,000	16,200,000

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և բացի այդ ընթացակարգի շրջանակներում հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերի և սույն ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը **05.11.2019թ.**-ին որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով 08.11.2019թ. ժամը 16:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ՝ բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ («Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ), իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակցին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 08.11.2019թ., ժամը 16:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցը չէր ներկայացել, ուստի մասնակցի գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 .11.2019թ. (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա սույն ընթացակարգի մասով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվեց «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև ընթացակարգի հրավերի **«Ֆինանսական միջոցներ»** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լ. Թազայան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ քան, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Գ. Ոսկանյան

Գնահատող Տ. Հունանյան

Գնահատող Վ. Իրիցյան

Գնումները համակարգող Լ. Թազայան